

Արձանագրություն №6/2014-2015

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2015թ. մարտի 26-ին տեղի ունեցած թիվ 6 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 67-ը (վաթսունյոթ):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. **Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում:** (Ջեկ.՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Ն. Պետրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյան)
2. **ԵՊՀ ներքին կարգապահական կանոններում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին** (զեկ.՝ ԵՊՀ գիտխորհրդի էթիկայի հանձնաժողովի նախագահ Ա. Ս. Բաղդասարյան):
3. **2015-16 ուստարվա ԵՊՀ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և հայցորդների ուսման վարձավճարների չափերի հաստատում** (զեկ. պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան):
4. **2015/16 ուստարվա հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության մասնագիտությունների ցանկի հաստատում** (զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
5. **2015-2016 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգի հաստատում** (զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
6. **2015-2016 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգի հաստատում** (զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
7. **Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի իրականացման 2014-15 ուստարվա 1-ին կիսամյակի արդյունքների մասին** (զեկ.՝ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Ա. Աղասյան):

8. Ընթացիկ հարցեր

8.1. Հայ նորագույն գրականության ամբիոնի պրոֆեսոր Վազգեն Գաբրիելյանին ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու մասին:

8.2. ԵՊՀ միջազգային հարաբերությունների, իրավագիտության, դեղագիտության և քիմիայի, կենսաբանության, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետներում Պողոս Նուբարի անվան կրթաթոշակ սահմանելու մասին:

8.3. ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ Արմենակ Մանուկյանի <Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում> ուսումնական ձեռնարկը վերահրատարակության երաշխավորելու և այն որպես ուսումնական ձեռնարկ ճանաչելու հարցում ՀՀ ԿԳ նախարարությանը միջնորդելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին. – Պրոֆեսորի և դոցենտի կոչում շնորհելու մասին: Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյանը ներկայացրեցին նաև պրոֆեսորի և դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Պրոֆեսորի կոչման հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը
1.	Կարապետյան Կարո Մնացականի	Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ
2.	Մկրտչյան Սամվել Սուրենի	Կրոնների պատմության և տեսության ամբիոնի վարիչ
3.	Սահակյան Արծրունի Սամվելի	Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի ասիստենտ
4.	Ենգոյան Աշոտ Փայլակի	Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ
5.	Ղամբարյան Կարեն Մարտինի	Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի դոցենտ

Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը
1.	Համբարյան Լուսինե Ռաֆայելի	Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի ասիստենտ
2.	Կարապետյան Լուսինե Վլադիմիրի	Օրգանական քիմիայի ամբիոնի ասիստենտ
3.	Բազուկյան Ինգա Լևոնի	Մանրէաբանության ու մանրէների և բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ
4.	Զայիմցյան Հայկ Գևորգի	Ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ամբիոնի ասիստենտ
5.	Մարոյան Լիլիթ Նորիկի	Ռոմանական բանասիրության ամբիոնի ասիստենտ
6.	Սողոմոնյան Մենուա	Քաղաքական ինստիտուտների և գործընթացների

	Անդրանիկի	ամբիոնի ասիստենտ
7	Բալայան Արշակ Ղարիբի	Մոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի ասիստենտ
8	Պետրոսյան Վարդուհի Գևորգի	Մամուլի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ
9	Ստեփանյան Լուսինե Սամվելի	Ընդհանուր հոգեբանության ամբիոնի ասիստենտ
10	Անտոնյան Քրիստինե Աղասի	Կառավարման և գործարարության ամբիոնի ասիստենտ
11	Գևորգյան Շուշանիկ Սամսոնի	Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ
12	Ավետիսյան Լևոն Վազգենի	Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Մինասյան Ռոբերտ (նախագահ)
2. Ավետիսյան Արմեն
3. Միրզոյան Եզնիկ
4. Զուլհալյան Գոհար
5. Շահնազարյան Դավիթ

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 67 անդամները: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ռ. Մինասյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	անվավեր
1.	Կարապետյան Կարո Մնացականի	63	4	0
2.	Մկրտչյան Սամվել Սուրենի	64	3	0
3.	Սահակյան Արծրունի Սամվելի	59	8	0
4.	Ենգոյան Աշոտ Փայլակի	65	2	0
5.	Ղամբարյան Կարեն Սարտինի	65	2	0
6.	Համբարյան Լուսինե Ռաֆայելի	66	1	0
7.	Կարապետյան Լուսինե Վլադիմիրի	65	2	0
8.	Բազուկյան Ինգա Լևոնի	64	3	0
9.	Զայիմցյան Հայկ Գևորգի	63	4	0
10.	Սարոյան Լիլիթ Նորիկի	66	1	0
11.	Սողոմոնյան Մենուա Անդրանիկի	66	1	0
12.	Բալայան Արշակ Ղարիբի	65	2	0
13.	Պետրոսյան Վարդուհի Գևորգի	65	2	0
14.	Ստեփանյան Լուսինե Սամվելի	66	1	0
15.	Անտոնյան Քրիստինե Աղասի	65	2	0
16.	Գևորգյան Շուշանիկ Սամսոնի	66	1	0
17.	Ավետիսյան Լևոն Վազգենի	65	2	0

Որոշեցին. – 2.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

1.2 Վերոնշյալ հավակնորդներին շնորհել պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

1. Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար
2. **Լսեցին.** – ԵՊՀ ներքին կարգապահական կանոններում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան, ԵՊՀ գիտական խորհրդի էթիկայի հարցերով հանձնաժողովի նախագահ Ա. Բաղդասարյանը նշեց, որ ի սկզբանե առկա էր կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մտադրությունը, սակայն հանձնաժողովի հետագա աշխատանքները ցույց են տվել, որ անհրաժեշտություն կա կանոնակարգն ընդունելու նոր խմբագրությամբ: Ա. Բաղդասարյանը նշեց, որ կանոնակարգի նախագիծը նախապես առաքված է եղել գիտխորհրդի անդամներին և պատրաստակամություն հայտնեց պատասխանելու հարցերին: Պարզաբանման նպատակով հարցեր բարձրացրին դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Ա. Ալեքսանյանը, ուսանող Ա. Առաքելյանը: Ռեկտոր Ա. Միմոնյանն առաջարկեց հաստատել կանոնակարգի նախագիծը:

Որոշեցին. - Հաստատել <<Երևանի պետական համալսարան>> Հիմնադրամի ներքին կարգապահական կանոնները՝ նոր խմբագրությամբ:

3. **Լսեցին.** - 2015-16 ուստարվա ԵՊՀ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և հայցորդների ուսման վարձավճարների չափերի հաստատման մասին: Պրոռեկտոր Գ. Գևորգյանը նշեց, որ ընթացիկ ուստարվա համեմատ 2015-16 ուստարում առաջարկվում է 50 հազար դրամով բարձրացնել ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա, սերվիս մասնագիտությունների գծով ուսման վարձավճարը: Ռեկտոր Ա. Միմոնյանը ֆակուլտետների դեկանների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ գնալով դիմորդների քանակի նվազում է նկատվում, ուստի, համալսարանի եկամուտները մեծ մասամբ ուսման վարձավճարներից գոյանալու հանգամանքը հաշվի առնելով, անհրաժեշտ է էլ ավելի մեծացնել ուշադրությունը ուսումնառության և դասավանդման որակի բարձրացման վրա:

Որոշեցին. –

1. Հաստատել 2015/2016 ուստարվա ուսման վարձի չափն ըստ մասնագիտությունների և կուրսերի համաձայն հավելվածի:
2. Համալսարանից հեռացված և ուսանողական իրավունքները վերականգնող, ինչպես նաև այլ բուհերից ԵՊՀ տեղափոխվող ուսանողների համար սահմանել համապատասխան մասնագիտության և ուսուցման համակարգի 1-ին կուրսի համար նախատեսված վարձի չափ:
3. Որոշման երկրորդ կետով նախատեսված դեպքում, երբ հեռակա ուսուցման համակարգի վարձի չափը ամրագրված չէ հավելվածում, սահմանել

վճարաչափ՝ համապատասխան մասնագիտության առկա ուսուցման 1-ին կուրսի համար նախատեսված վարձի 80 տոկոսի չափով:

4. **Լսեցին.** - 2015/16 ուստարվա հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության մասնագիտությունների ցանկի հաստատման մասին: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը նշեց, որ ընթացիկ ուստարվա համեմատ 2015-16 ուստարվա հեռակա ուսուցման բակալավրիատի ընդունելության մասնագիտությունների ցանկը պահպանվել է նույնությամբ, սակայն որոշ մասնագիտությունների գծով ընդունելության ցածր մակարդակի պահպանման դեպքում հնարավոր է հաջորդ ուստարում դադարեցնել ընդունելությունն այդ մասնագիտությունների գծով: Ինչ վերաբերում է մագիստրատուրային, ապա այստեղ երեք մասնագիտություններ, ընթացիկ ուստարվա համեմատ, կրճատվում են: Ա. Գրիգորյանը նշեց, որ վերջին հանգամանքը, ի մասնավորի, պայմանավորված է նրանով, որ 2015-16 ուստարվա մագիստրատուրան համալրվում է 2011թ. բակալավրիատ ընդունված ուսանողներով, երբ առհասարակ դիմորդների խիստ պակաս է եղել:

Որոշեցին. - Հաստատել Երևանի պետական համալսարանի հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 2015/2016 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների ցանկը:

5. **Լսեցին.** - 2015-2016 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգերի հաստատման մասին: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը նշեց, որ 2014-15 ուստարում բակալավրիատի ավարտական կուրսերում ուսանողների խիստ նվազ թվաքանակի պատճառով (պայմանավորված 2011թ. ընդունելության առանձնահատկությամբ), առկա ուսուցման մագիստրատուրայի ընդունելությունը համալրելու նպատակով, առաջարկվում է հնարավորություն տալ հեռակա ուսուցման բակալավրիատն ավարտած ուսանողներին ևս մասնակցել առկա ուսուցման մագիստրատուրայի պետպատվերով սահմանված տեղերին: Գիտական խորհրդի անդամները հավանություն տվեցին առաջարկին: Ա. Գրիգորյանը նշեց, որ հեռակա ուսուցման մագիստրատուրայի կանոնակարգի պարագայում միայն նախատեսվում է գործերի հանձնման և ընդունելության ժամկետների փոփոխություն:

Որոշեցին. - Հաստատել Երևանի պետական համալսարանի առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 2015/2016 ուստարվա ընդունելության կանոնակարգերը:

6. **Լսեցին.** - Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի իրականացման 2014-15 ուստարվա 1-ին կիսամյակի արդյունքների մասին: Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Ա. Աղասյանը ներկայացրեց ծրագրի 2014-15 ուստարվա 1-ին կիսամյակի, ինչպես նաև 2011-14 թթ. համահավաք արդյունքներն ըստ ծրագրի կառուցամասերի և դրանցում առկա մոդուլների: Ժ. Աղասյանը խնդրեց ֆակուլտետների ղեկաններին ճշգրտել ծրագրին մասնակցող դասախոսների

ցուցակները՝ դրանցում հնարավոր բացթողումները բացատրելու նպատակով: Նա նշեց, որ 400 դասախոս դեռևս չի ներկայացրել հետազոտական աշխատանք՝ հետազոտական կառուցամասի գծով անհրաժեշտ կրեդիտներն ապահովելու նպատակով: Ռեկտոր Ա. Միմոնյանը նշեց, որ ակներև է, որ պատճառը ոչ թե այդքան մեծ թվով դասախոսների կողմից հետազոտական աշխատանք չկատարելն է, այլ դրանք չներկայացնելը: Ա. Միմոնյանը սա ևս անընդունելի համարեց, այն որակելով որպես անփույթ վերաբերմունք աշխատանքային պարտականությունների նկատմամբ: Նա դեկաններին կոչ արեց ֆակուլտետներում արագ լուծում տալ հարցին, ինչպես նաև ուշադրության կենտրոնում պահել դասախոսների՝ անզլերենի դասընթացներին մասնակցությունը:

Որոշեցին. – Ժ. Աղասյանի զեկույցն ընդունել ի գիտություն:

7. **Լսեցին.** – Ընթացիկ հարցեր:

7.1 Լսեցին. - Հայ նորագույն գրականության պատմության ամբիոնի պրոֆեսոր Վազգեն Արշալույսի Գաբրիելյանին նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու մասին: Ռեկտորն Ա. Միմոնյանն իր խոսքում նշեց, որ նկատի ունենալով հայ նորագույն գրականության ամբիոնի ու հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի միջնորդությունը, ինչպես նաև այն իրողությունը, որ Վ. Գաբրիելյանը արդեն 55 տարի աշխատում է ԵՊՀ-ում, 34 տարի անընդմեջ ղեկավարել է հայ նորագույն գրականության ամբիոնը, եղել է շուրջ 20 ասպիրանտների ու հայցորդների ղեկավար, հեղինակել է բազմաթիվ մենագրություններ, ուսումնամեթոդական աշխատանքներ, գիտական հոդվածներ, առաջարկեց բավարարել հայ բանասիրության ֆակուլտետի միջնորդությունը:

Որոշեցին. - հայ նորագույն գրականության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր Վազգեն Արշալույսի Գաբրիելյանին շնորհել ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի պատվավոր վարիչի կոչում:

7.2 Լսեցին. - ԵՊՀ միջազգային հարաբերությունների, իրավագիտության, դեղագիտության և քիմիայի, կենսաբանության, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետներում Պողոս Նուբարի անվան կրթաթոշակ սահմանելու մասին: ռեկտոր Ա. Ն. Միմոնյանը հայտնեց, որ հայ մեծ բարերար, ազգային-հասարակական գործիչ Պողոս Նուբարի անվան կրթաթոշակների հատկացման հարցը սահմանված կարգով քննության է առնվել ԵՊՀ միջազգային հարաբերությունների, դեղագիտության և քիմիայի, կենսաբանության, իրավագիտության, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետներում, որոնք ներկայացրել են ուսման մեջ բարձր առաջադիմություն ունեցող և հասարակական ակտիվություն ցուցաբերող ներքոնշյալ ուսանողներին.

1. Վարդուհի Հարությունյան- միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, 3-րդ կուրս,
2. Սևակ Գրիգորյան – դեղագիտության և քիմիայի ֆակուլտետ, 3-րդ կուրս,
3. Հեղինե Գևորգյան – կենսաբանության ֆակուլտետ, 3-րդ կուրս,
4. Լիլիթ Պետրոսյան – իրավագիտության ֆակուլտետ, մագիստրատուրա 1-ին կուրս,

5. Ներսես Սրապիոնյան – մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ, մագիստրատուրա 1-ին կուրս:

Նշված ֆակուլտետների դեկանները՝ Գ. Պետրոսյան, Տ. Ղուչիկյան, Է. Գևորգյան, Գ. Ղազինյան, Ա. Սահակյան, հավաստեցին, որ կրթաթոշակի ներկայացված ուսանողները ցուցաբերում են բարձր առաջադիմություն և ակտիվ հասարակական գործունեություն:

Որոշեցին. – Վարդուհի Հարությունյանին, Սևակ Գրիգորյանին, Հեղինե Գևորգյանին, Լիլիթ Պետրոսյանին և Ներսես Սրապիոնյանին տրամադրել Պոդոս Նուբարի անվան կրթաթոշակ:

7.3 Լսեցին. - ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ Արմենակ Մանուկյանի «Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում» ուսումնական ձեռնարկը վերահրատարակության երաշխավորելու և այն որպես ուսումնական ձեռնարկ ճանաչելու հարցում ՀՀ ԿԳ նախարարությանը միջնորդելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը, ներկայացնելով հարցի շուրջ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի, միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստերում առաջ քաշված միջնորդությունն ու դրական կարծիքը, առաջարկեց դրական լուծում տալ հարցին:

Որոշեցին. –

1. ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ Արմենակ Սարիբեկի Մանուկյանի ««Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում»» վերնագրով ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:
2. Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ նշված ձեռնարկը որպես բուհական ուսումնական ձեռնարկ ճանաչելու հարցում:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

01.04.2015թ.